

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար*

ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ /ծածկագիր 2.1-1/

Բաժնի պետը ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության պետական կամ համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

- Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ/ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտի անրհաժեշտ իմացություն:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթը կկայանա 2011 թվականի նոյեմբերի 4-ին ժամը 14:30-ին Նալբանդյանի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայանան հետևյալ փաստաթղթերով.

- Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/
- Տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները, բնօրինակների հետ միասին
- Հայտարարություն այն մասին, որ չի տառապում ՀՀ կառավարության 2005թ. մարտի 3-ի N -310-ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:
- Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ
- Արական սեռի անձինք զին գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասային կցագրման պատճենով:

- Մեկ լուսանկար 3X4 չափի
- Անձնագրի պատճեն

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյանի գյուղապետարան, ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցեն ք.Արմավիր, Աբովյան 71 հեռ.՝ 0237-2-76-49, 2-07-70/

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից -16:00-ն բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2011 թվականի հոկտեմբերի 20-ը: